

---

---

ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՄԻՋՍԵՐՆԴԱԿԱՆ  
ՓՈԽԱՆՑՄԱՆ ԼԾԱԿՆԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

ՌՈՊԵՐ ՏԵՐ-ՄԵՐԿԵՐՅԱՆ (Ֆրանսիա)

Հայկական սփյուռքի բոլոր կազմակերպությունները՝ մշակութային, հայրենակցական և այլ միությունները, հետամուտ են երկու հիմնական նպատակի. առաջինը հայոց ցեղասպանության ճանաչումն է Թուրքիայի կողմից, երկրորդ և գլխավոր նպատակը հայապահպանման, հայակերտման գործընթացն ապահովելն է: Ազգապահպանումը կարող է իրականանալ միայն ազգային մշակութային ինքնության արժեքների միջսերնդական փոխանցման միջոցով: Առանց այդ գործընթացի կարող է ստեղծվել միջսերնդական ընդհատում, որի հետևանքով ազգային ինքնությունը բնորոշող հիմնական արժեքները՝ լեզուն, ավանդությունները, կրոնը, պատմական հիշողությունը և այլն, կորցնում են իրենց ազգային կուռ հարակցությունը երաշխավորող ուժը և որի հետևանքով տեղի է ունենում դանդաղ, աստիճանական ապագայնացման գործընթաց՝ թե՛ քանակական, թե՛ որակական իմաստով:

Ահա թե ինչու, համայնքի հարատևությունն ապահովելու միակ գործուն ազդակը ազգային ինքնության արժեքների միջսերնդական փոխանցումն ապահովելն է լավագույն՝ ազդու ձևով: Սա Սփյուռքի հարատևության, մշտատևության նախապայմանն է:

Անհրաժեշտ է հիշեցնել, որ Սփյուռքում, որ երկրում էլ դա լինի, հայոց լեզվի գործառության տարածքները և ընդհանրապես մշակութային արժեքների փոխանցման լծակները բավական սահմանափակ են: Եթե վերցնենք Ֆրանսիայի օրինակը, որը Եվրոպայում ամենահայաառժեք երկիրն է (400 հազարից ավելի ծագումով հայ քաղաքացիներ), ապա հայոց լեզուն օգտագործվում է որպես հաղորդակցության միջոց, մտքերն արտահայտելու գործիք հետևյալ տարածքներում.

- ընտանեկան միջավայր և բարեկամական շրջապատ,
- մշակութային միություններ ու կազմակերպություններ,
- կրթական հաստատություններ՝ դպրոց ու համալսարան,
- եկեղեցական, պաշտամունքային վայրեր:

Այս չորս տարածքներից դուրս գործում է ընդունող երկրի պետական, գերիշխող լեզուն՝ տվյալ դեպքում ֆրանսերենը:

Եթե նկատի ունենանք, որ մշակութային միություններում, հայկական բոլոր կազմակերպություններում որպես աշխատանքային լեզու օգտագործվում է ֆրանսերենը (դեկավարների կողմից հայերենն անբավարար չափով տիրապետելու պատճառով), և եթե հաշվի առնենք, որ ամեն կիրակի կիսադատարկ եկեղեցիներում պատարագից

հետո իրար են հանդիպում մի քանի տարիքավոր հավատացյալներ, որոնք մի քանի բույսեր գրուցում են հայերեն, իսկ ավելի երիտասարդները խոսում են ֆրանսերեն, ապա կարելի է եզրակացնել, որ հայոց լեզվի՝ որպես ակտիվ հաղորդակցության միջոցի օգտագործման հիմնական տարածքները մնում են ընտանեկան միջավայրը և ուսումնական հաստատությունները:

Ինչ վերաբերում է Ֆրանսիայում գործող հայկական ուսումնական հաստատություններին, ապա պետք է ասել, որ այսօր գործում են հինգ ամենօրյա դպրոց, որոնցից երեքում հաճախում են մինչև տասը-տասնմեկ տարեկան երեխաներ (որից հետո աշակերտները տեղափոխվում են ֆրանսիական դպրոց), մեկ դպրոց, որտեղ հաճախում են մինչև տասնչորս տարեկան երեխաներ և, վերջապես, ամբողջ Ֆրանսիայում կա միայն մեկ ուսումնական հաստատություն (դա Մարսել քաղաքի Համազգային դպրոցն է իր 320 աշակերտներով), որտեղ երեխաները կարող են սովորել մանկապարտեզից մինչև հասունության ատեստատ, այսինքն՝ մինչև 17-18 տարեկան հասակը:

Այս բոլոր դպրոցների աշակերտների ընդհանուր թիվը, միասին վերցրած, հասնում է մոտ 950-ի, այսինքն՝ 400 հազարի հասնող հայ համայնքի հնարավոր աշակերտության միայն 0,3 տոկոսը: Հասկանալի է, որ այս թիվը չափազանց աննշան է ազգային ինքնության արժեքները մի ամբողջ սերնդի փոխանցելու և հայ համայնքի սերնդափոխությունն ապահովելու համար:

Եթե ֆրանսահայ դպրոցը չի ապահովում երիտասարդ սերնդի ճնշող մեծամասնությանը ազգային պատկանելության զգացողություն ներշնչելու գործընթացը, նրան ազգային մշակութային հիմնական արժեքները փոխանցելը, երիտասարդությանը հայոց գանձարանի լիարժեք ժառանգորդներ դարձնելը, ապա մնում է միայն մեկ հիմնական տարածք՝ ընտանեկան միջավայրը, որը կարող է լիարժեք կատարել այդ դերը:

Հայ երեխաների ճնշող մեծամասնությունը մանուկ հասակից հայեցի կրթություն ու դաստիարակություն է ստանում տան շրջապատում՝ մեծ մասամբ ծնողների և մասնակի ձևով պապիկ/տատիկ սերնդի փոխանցած գիտելիքների միջոցով:

Ընտանեկան միջավայրում ազգային արժեքների միջսերնդական փոխանցման համակարգը և գործընթացն ուսումնասիրելու նպատակով կատարել ենք հարցախույզ. ֆրանսահայ ավելի քան երկու հարյուր ընտանիքներ (Մարսել, Փարիզ, Լիոն, Վարանս, Նիցցա, Ավինյոն քաղաքներում բնակվող) լրացրել են մեր առաջարկած անունն հարցարանը\*:

Հարցերը վերաբերում են ազգային ինքնության մնայուն արժեքներ ներկայացնող տարբեր գործոններին՝ լեզու, պատմություն, կրոն, ավանդական սովորություններ, գրական - երաժշտական ընկալունակություն, մամուլ, Հայաստանին վերաբերող կամ հիշեցնող զանազան իրեր, լուսանկարներ, սալիկներ, խտասկավառակներ, գրքեր, արձանիկներ, պատկերազրքեր:

\* Հարցախույզը կատարվել է 2008 թ. հունվար - հունիս ամիսներին:

*Հարցաթերթիկները վերաբերում են երկու կարգի փոխհարաբերությունների՝ մի կողմից պապիկ / տատիկ – թոռներ, և մյուս կողմից՝ ծնող – երեխա:*

*Պապիկ/տատիկ-թոռներ փոխհարաբերություններ (այսուհետև՝ պ/տ-թ)*

*Ի՞նչ չափով է պ/տ սերունդը փոխանցում թոռներին հայոց ինքնությունը ներկայացնող արժեքներ:*

*Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պ/տ սերունդն ընդհանրապես չի բնակվում կամ զբաղեցնում թոռների հետ նույն տունը կամ բնակարանը (գոնե Ֆրանսիայում այդպես է): Այդ իսկ պատճառով, կարևոր է նախ ճշտել պ/տ-թ միջսերնդական հանդիպումների հաճախականությունը:*

*Հարցախույզը ցույց է տալիս, որ պ/տ սերնդի միայն 7 տոկոսն է հանդիպում թոռների հետ գրեթե ամեն օր, իսկ 48 տոկոսը հանդիպում է շաբաթը մեկ անգամ: Մնացած 45 տոկոսը հանդիպում է թոռանը հազվադեպ, ոչ հաճախ, քան ամիսը մեկ անգամ:*

*Քանի որ միջսերնդական փոխհարաբերությունների մեջ սակավաթիվ հանդիպումները չեն կարող նշանակալից որևէ դեր կատարել (լեզվական և այլ ոլորտներում) որպես երիտասարդ սերնդին ազգային արժեքները փոխանցելու միջոց, ապա մենք դրանք հաշվի չենք առնի որպես փոխանցման լծակ:*

*Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ պ/տ-թ հարաբերությունների, շփումների, հանդիպումների միայն կեսը՝ 55 տոկոսը կարող է ծառայել, այն էլ այս կամ այն չափով, որպես թոռներին ազգային, մշակութային արժեքների փոխանցման լծակ:*

*Մնում է բացահայտել, թե մշակութային ո՞ր արժեքներն են փոխանցվում և մանավանդ ի՞նչ չափով:*

*«Ձեր թոռների հետ հայերեն խոսու՞մ եք» հարցին պատասխանող 42 տոկոսը տալիս է դրական պատասխան, իսկ 58 տոկոսը՝ բացասական: Այս տոկոսային հարաբերություններից հետևում է, որ թոռների սերնդի միայն քառորդն է, այսինքն՝ 4-5 երեխաներից միայն մեկն է լսում հայերեն խոսակցություն և կարող է ձեռք բերել լեզվական տարրական գիտելիքներ:*

*Ինչպես հայտնի է, լեզուն ազգային ինքնությունը բնորոշող գլխավոր գործոնն է, ազգային հիշողության շտեմարանը: Հայերեն հասկանալը, խոսելը, երեխային տալիս է ազգային, համայնքային պատկանելության գործող զգացում: Բացի այդ, լեզվի իմացությունը մյուս բոլոր ազգային ինքնությունը բնորոշող արժեքների՝ երգ, պար, պատմություն, կրոն, գրականություն և այլն, հասկանալու, արժևորելու բանալին է: Առանց լեզուն իմանալու հնարավոր չէ ունենալ ազգային պատկանելության զգացում: Մեզ թվում է, որ ցույց տրված տոկոսային հարաբերությունը (չորսից միայն մեկ երեխա է լսում հայերեն), շատ անբավարար է պ/տ կողմից մի ամբողջ սերնդի լեզվական էական գիտելիքների փոխանցման միջոց լինելու համար, մանավանդ որ դժվար է հաշվարկել, գնահատել փոխանցվող լեզվական գիտելիքների պարունակությունը (պարզ է, որ դա վերաբերում է սովորական, ամենօրա խոսակցական լեզվի բառապաշարին, առանց որևէ քերականական գիտելիքների): Այսուհանդերձ, նշենք,*

որ ամեն դեպքում պ/տ սերունդը մասնակիորեն մասնակցում է լեզվական գիտելիքների փոխանցմանը երիտասարդ սերնդի գոնե մի մասին:

Այն հարցին, թե «Տանը ունե՞ք Հայաստանին վերաբերող գրքեր, պատկերագրքեր, լուսանկարներ, զանազան իրեր, հուշանվերներ, արձանիկներ և այլն», հարցվածների 87 տոկոսը տալիս է դրական պատասխան, և թոռների սերնդի 55 տոկոսը հետաքրքրվում է կամ հարցեր տալիս այդ իրերի մասին:

Այս թվերը ցույց են տալիս, որ տան մեջ պահվող և Հայաստանին վերաբերող իրերը կարևոր դեր են կատարում երեխաներին պատկերացում տալու երբեք չտեսած իրենց երկրի մասին, գաղափար կազմելու իրենց նախնիների հայրենիքի պատմական նշանակություն ունեցող հուշարձանների ու վայրերի մասին:

Ինչ վերաբերում է մամուլին (խոսքը ֆրանսերեն լեզվով Հայաստանին վերաբերող մամուլի մասին է, այդպիսի 5 ամսագիր ու երկշաբաթաթերթ է լույս տեսնում), ապա եթե ավագ սերնդի 60 տոկոսը բաժանորդագրված է, միայն թոռների 10 տոկոսն է կարդում, հետաքրքրվում այդ մամուլով, ինչը նշանակալից տեղ չի կարող գրավել տեղեկատվություն փոխանցելու գործընթացում:

Տոկոսային նույն հարաբերությունն ունենք տանը գտնվող երաժշտական սալիկների ու տեսասալիկների դեպքում:

Պ/տ ընտանիքների միայն 21 տոկոսն է դիտում Հայաստանի հեռուստատեսության ծրագրերը, իսկ թոռների միայն 3 տոկոսն է հետաքրքրվում այդ ծրագրերով, երբ գտնվում է նրանց տանը:

«Դասակարգեցե՞ք ազգային մշակութային ինքնությունը ներկայացնող այն բնագավառները (լեզու, կրոն, պատմություն, ցեղասպանություն, ավանդություններ, երաժշտություն, երգ, պար, խոհանոց, կինո, սպորտ), որոնք, ըստ ձեզ, այս կամ այն չափով փոխանցում էք ձեր թոռներին» հարցին առավելությունը տրվում կրոնին (28 տոկոս), լեզվին (25 տոկոս), սրանց հաջորդում են երաժշտությունը, պարը (13 տոկոս), խոհանոցը (10 տոկոս), պատմությունը (10 տոկոս), ցեղասպանությունը (6 տոկոս), կինոն (6 տոկոս), սպորտը (2 տոկոս):

«Ձեր թոռանը տանու՞մ էք ապրիլի 24-ի ցույցերին» հարցին 50 տոկոսը տալիս է դրական պատասխան: Փոքրահասակների համար ապրիլի 24-ի ցույցերին մասնակցելը կարող է ազգային պատկանելության կարևոր ազդակ հանդիսանալ:

Եվ վերջին՝ «Կարծու՞մ էք որ -յան վերջավորություն ունեցող հայկական ազգանունը կարող է երեխային տալ ազգային պատկանելության զգացում» հարցի պատասխանների 45 տոկոսը դրական է, 55 տոկոսը բացասական, այսինքն՝ -յան-ով վերջացող ազգանուն ունենալը չի կարող ազգային կամ համայնքային պատկանելության ուժեղ ազդակ լինել:

Ի՞նչ եզրակացության կարելի է հանգել՝ ի մի բերելով այս բոլոր հարցերի պատասխանները:

Նախ հիշեցնենք, որ Սփյուռքում ավագ սերունդը, որը կոչեցինք պ/տ սերունդ՝ 65-70 տարեկանից մեծ, ազգային ինքնության արժեքների հիշողությունը կրողներն են, նրանք իրենց ընտանիքի պատմության կենդանի հիշողությունն են, որոնց մեծ մասը,

թերևս, տեսել է, շփվել է ցեղասպանությունից մազապուրծ ապաստանյալների սերնդի հետ: Նրանց ազգային պարտքն է մատաղ սերնդին փոխանցել ազգային գանձարանի լավագույն արժեքները և օգնել երիտասարդներին ճանաչելու իրենց ազգային արմատները:

Պետք է ասել, որ Ֆրանսիայում հայ համայնքի այդ սերունդը՝ ավագ սերունդը, այդ դերը կատարում է մասնակի, ոչ լիարժեք: Նախ, որովհետև ավագ սերունդ - մատաղ սերունդ կանոնավոր հանդիպումները հաճախակի չեն: Երկրորդ՝ պ/տ սերունդը չունի պատրաստվածություն այդ առաքելությունը մեթոդական, նպատակասլաց ձևով իրագործելու համար:

Հետախուզությունը ցույց է տալիս, որ ազգային ինքնությունը հավաստող արժեքները փոխանցվում են մասնակիորեն, իրար կցելով մշակութային կցկտուր տեղեկություններ: Դա պայմանավորված է նաև երեխայի տարիքով. 4-5 տարեկան երեխան չի կարող հասկանալ կամ ըմբռնել այն, ինչ 10 կամ 15 տարեկան երեխան: Իրականում երեխայի մոտ ազգային ինքնությունը բնորոշող գծերը փոխանցվում են փուլ առ փուլ, աստիճանաբար, ըստ ընտանեկան միջավայրում հայկական մթնոլորտը ներկայացնող գործոնների, որոնք երեխան ձեռք է բերում տարիների ընթացքում ու այդպես կառուցում իր ինքնությունը:

Ավագ սերնդի կողմից 4-րդ և 5-րդ սերունդներին փոխանցվող ազգային մշակութային արժեքները կարելի է համարել որպես նախնական ծանոթացման, զարթոնքի, երկրի, լեզվի, ավանդությունների, կրոնի բացահայտման, մի տարածքի մասին տեղեկություններ, որոնց արդյունքները ի հայտ են գալիս չափահաս հասակում: Այդ փոխանցված տեղեկությունները կարող են ունենալ երկու հետևանք՝ դրանք կամ զարգանում ու խորանում են, կամ էլ մարում են և հիշողությունից անհետանում:

Առաջին դեպքում չափահաս անձը ոչ միայն հիշում է մանկության տարիներին ընտանեկան միջավայրում իրեն փոխանցված իր ազգային արմատներին վերաբերող տեղեկությունները, այլև հետաքրքրությունից մղված ավելի է խորացնում գիտելիքները, կարդում է գրքեր ու մամուլ, դիտում է կինոնկարներ, գնում է համերգների ու դասախոսությունների, մասնակցում է ապրիլի 24-ին կազմակերպված ցույցերին, զուցե և դառնում է մշակութային կազմակերպության անդամ, հետևում է Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող իրադարձություններին: Այսպիսով, նրա մոտ զարգանում է ազգային, մշակութային գիտակցություն, ու նա իրեն զգում է որպես հայ համայնքի լիիրավ անդամ: Անձը իրեն համարում է հայ մշակութային հավաքական գանձարանի ժառանգորդը: Այդ «փրկված» անձը կանի ամեն ինչ, որպեսզի իր երեխաներին ու թոռներին փոխանցի ազգային ինքնության արժեքները: Նման անհատները հազարամյակներ տևող հայոց պատմության շղթայի այն օղակն են, որոնք ապահովում են հայոց ինքնության պատմության հարատևությունն ու շարունակականությունը:

Երկրորդ դեպքում չափահաս անձը աղոտ ձևով է հիշում մանկության կամ նույնիսկ պատանեկության տարիներին ընտանեկան միջավայրում, մեծ սերնդից կամ ծնողներից լսած, ստացած տեղեկությունները հայերի ու Հայաստանի մասին, սա-

կայն այդ բոլորը նրա համար հեռավոր հիշատակներ են, նա բացարձակապես անտեղյակ է հայոց մշակութային արժեքներին, կարելի է ասել, որ նրա համար խորթ են հայոց լեզուն, երաժշտությունը, պատմությունը, կրոնը. նա չի հաստատարվում Հաստատանում տեղի ունեցող իրադարձություններով: Այդ անձերը անվերադարձ կորցնում են իրենց նախնիների ազգային ինքնության արմատները: Նման անձինք հազարավոր տարիների պատմություն ունեցող հայոց ինքնության շղթայի վերջին օղակն են, օղակ, որը չի ունենա շարունակություն, և որի շղթան կրնա հատվի վերջնականապես: Դժբախտաբար, սա ճնշող մեծամասնության ճակատագիրն է:

#### Ծնող – երեխա փոխհարաբերություններ

Մանուկ սերնդի դաստիարակման և նրան ազգային ինքնության արժեքների փոխանցման հիմնական պարտականությունը պատկանում է ծնողներին: Երեխայի և ծնողների շփումները տևական ու կանոնավոր են, և քանի որ, ի տարբերություն պ/տ շփումների, նրանց հանդիպումներն ամենօրյա է, ապա հարցման ենթակա չէ:

Լեզվական առաջին գիտելիքները երեխաները ձեռք են բերում ծնողներից: Հարցախոյզի առաջին հարցը վերաբերում է ընտանեկան միջավայրում հայոց լեզվի կիրառությանը: «Ձեր երեխաների հետ հայերեն խոսու՞մ եք» հարցին պատասխանողների 55 տոկոսը տալիս է դրական պատասխան, որն առաջին հայացքից կարող է թերևս դրական թվալ: Մակայն երբ հարցը վերաբերում է ընտանիքում լեզվի կիրառության հաճախականությանը, ապա պատասխանողների միայն 44 տոկոսն է հաստատում, որ հայերեն է խոսում սովորաբար ամեն օր, իսկ մնացած 56 տոկոսը տանը հայերենը գործածում է երբեմն: Նկատի ունենալով, որ լեզվական գիտելիքները կարող են ձեռք բերվել միայն կանոնավոր, հետևողական շփումների շնորհիվ, նշված տոկոսային հարաբերություններից կարելի է եզրակացնել, որ ընտանեկան միջավայրում երեխաների միայն 20 տոկոսն է (5-ից մեկը) հաճախակի հայերեն խոսք լսում լեզվական գիտելիքներ ձեռք բերելու համար: Տոկոսային նշված հարաբերությունը չափազանց անբավարար է մեկ ամբողջ սերնդի լեզվական գիտելիքներ փոխանցելու համար: Եվ եթե նկատի ունենանք, որ այդ երեխաների մի մասը հաճախում է հայկական դպրոց, ապա ընտանեկան միջավայրում ծնողներից երեխաներին փոխանցվող հայերեն թեկուզ տարրական գիտելիքները վերաբերում են մի չնչին փոքրամասնությանը:

Ընդհանուր առմամբ, հարցումներից պարզում է, որ ֆրանսահայ համայնքում ծնողներից զավակներին լեզվական գիտելիքների փոխանցման գործընթացը խիստ անբավարար է և իր մեջ պարունակում է ապագայի համար կանխատեսելի վտանգ: Այսօրվա երեխաների ու պատանիների սերունդն էլ ավելի քիչ գիտելիքներ կփոխանցի իրենց զավակներին: Նշենք, որ հարցաթերթիկին պատասխանող ծնողների 61 տոկոսի երեխաները չափահաս են (18 տարեկանից մեծ), 39 տոկոսը՝ անչափահաս:

«Դասակարգեցե՛ք ազգային ինքնություն ներկայացնող այն 10 արժեքները (լեզու, կրոն, երաժշտություն, պատմություն, երգ, պար, խոհանոց, կինո, սպորտ, գրական-

նություն), որոնք, ըստ ձեզ, փոխանցում էք ձեր երեխաներին» հարցին առավելությունը ըստ կարգի տրվում է՝ լեզվին (50 տոկոս), կրոնին (48 տոկոս), պատմությանը (35 տոկոս), խոհանոցին (16 տոկոս), երաժշտությանը և պարին (8-ական տոկոս), երգին (2 տոկոս), իսկ սպորտին և գրականությանը դրական պատասխան չի տրվել:

Այս հարցումների արդյունքում պարզվում է, որ ծնողները մեծ կարևորություն են տալիս ազգային մշակութային մնայուն արժեքներին՝ լեզու, կրոն, պատմական հիշողություն, որոնք նախորդում են գեղարվեստական և խոհանոցային ոլորտներին:

«Ընտանեկան շրջապատում ձեր երեխաների հետ խոսու՞մ էք հայոց եկեղեցու, ավանդությունների, խոհանոցի, ցեղասպանության, պատմության մասին» հարցին առավելությունը տրվում է խոհանոցի ոլորտին (80 տոկոս), որին հաջորդում է ցեղասպանությունը (76 տոկոս), սովորություններ - ավանդությունները (66 տոկոս), պատմությունը (60 տոկոս), եկեղեցին (58 տոկոս), քաղաքականությունը (36 տոկոս): Նշենք, որ պատասխանողների 10 տոկոսը հայտարարում է, որ իրենց երեխաներին այդ ոլորտներում ոչինչ չեն փոխանցում: Տոկոսային այս հարաբերությունները ցույց են տալիս, որ խոհանոցի ոլորտը ծնողները համարում են երեխաներին փոխանցվող ազգային կարևոր արժեքներից մեկը: Իսկ ցեղասպանությունը ծնողների համար ազգային պատկանելություն ներշնչող պատմական կարևոր երևույթ է:

«Դուք քաջալերու՞մ էք ձեր երեխաներին ճանապարհորդել Հայաստան» հարցին, դրական պատասխան է տալիս չափահաս երեխաներ ունեցող ծնողների 50 տոկոսը և անչափահաս երեխաներ ունեցող ծնողների 26 տոկոսը: Ծնողների ճնշող մեծամասնությունը օգտակար կամ շահավետ է համարում իրենց երեխաներին Հայաստան ուղարկելը, որը երիտասարդ սերնդին հնարավորություն է տալիս ծանոթանալու նախնիների երկրին, որի մասին շատ են լսել ընտանեկան միջավայրում: Փորձը ցույց է տալիս, որ Հայաստան կատարած ճանապարհորդությունների ընթացքում Մփյուռքի երիտասարդ սերունդը ոչ միայն անձամբ ծանոթանում է նախնիների մշակութային արժեքներին, այլև ներշնչվում է ազգային պատկանելության զգացմունքով: Այդ ճանապարհորդություններն ազդու գործոն են Մփյուռքի երիտասարդ սերնդին իրենց արմատների մշակույթին հարելու գործում:

Այն հարցին, թե «Դուք օգտակա՞ր էք համարում ձեր երեխաներին ուղարկել հայկական ամառային ճամբարներ», ծնողների 60 տոկոսը տալիս է դրական պատասխան, որոնցից 25 տոկոսը անչափահաս երեխաների ծնողներ են: Չնայած իրենց կարճ տևողությանը, տարին միայն երեք շաբաթ, ամառային ճամբարները երեխաներին գուտ հայկական մթնոլորտի մեջ խորասուզվելու լավագույն միջոց են: Երգ, պար, լեզվի դասընթացներ, պատմական կարևոր իրադարձությունների հիշատակում. երեխաներին հնարավորություն են տալիս մոտիկից ծանոթանալու հայոց ինքնության կարևոր մշտատև արժեքներին: Բացի այդ, երեխաների միջև հաստատվող անձնական շփումները, ծանոթություններն ուժեղացնում են ազգային համայնքային պատկանելության զգացմունքները:

Ծնողների 68 տոկոսը համաձայն է, որ հնարավորության դեպքում երեխաները հաճախեն հայկական դպրոց: Սա, անշուշտ, տոկոսային ուրախալի ցուցանիշ է, որը

ցույց է տալիս, որ ծնողները գիտակցում են, որ միայն դպրոցը կարող է երեխաներին փոխանցել գրական հայերեն և ազգային մշակութային կայուն արժեքներ:

Ծնողների 88 տոկոսը քաջալերում է երեխաներին հաճախել հայկական ներկայացումների կամ համերգների, և 60 տոկոսը համաձայն է, որ իրենց երեխան հայկական երիտասարդական միության կամ ակումբի անդամ դառնա: Տոկոսային այս հարաբերություններից կարելի է եզրակացնել, որ ծնողների համար կարևոր է իրենց երեխաներին ֆրանսիական դպրոցին զուգահեռ հնարավորություն տալ գտնվելու հայկական միջավայրում:

Հարցադրվող ծնողների 93 տոկոսը հավաստում է, որ տանն ունեն Հայաստանին վերաբերող կամ այն հիշեցնող գրքեր, այլբոսեր, հուշանվերներ, փոքրիկ խաչքարեր, քարտեզներ, որոնք ստեղծում են հայկական միջավայր: Դրանք հայ մշակութային Յինին քննությունը փոխանցելու հզոր լծակներ են: Հարցադրվող ծնողների 93 տոկոսը հավաստում է, որ տանը ունեն այդպիսի իրեր, որոնցով երեխաները տեղեկացվում են իրենց ընտանիքի ազգային ակունքների մասին:

«Տանը Հայաստանին վերաբերող խոսասալիկներ, տեսասալիկներ ունե՞ք» հարցին դրական պատասխան են տալիս չափահաս երեխաներ ունեցող ծնողների 56 տոկոսը և անչափահաս երեխաներ ունեցող ծնողների 35 տոկոսը: Սակայն չափահաս երեխաների միայն 36 տոկոսը և անչափահասների միայն 25 տոկոսն է նայում ու օգտվում այդ տեսանյութերից:

Ֆրանսալեզու հայ մամուլը փոքր դեր է կատարում ազգային մշակութային արժեքները փոխանցելու գործընթացի մեջ: Չափահաս երեխաների միայն 23 տոկոսն է կարդում այդ մամուլը, մինչդեռ ծնողների 91 տոկոսը բաժանորդագրված է: Ինչ վերաբերում է անչափահաս երեխաներին, ապա նրանց միայն 3 տոկոսն է կարդում ֆրանսահայ մամուլը:

Եթե ծնողների 36 տոկոսն է դիտում Հայաստանի հեռուստատեսության հաղորդումները, ապա չափահաս երեխաների միայն 16 տոկոսը և անչափահասների 8 տոկոսն է օգտվում այդ հեռուստահաղորդումներից: Խիստ ցածր տոկոսային այս հարաբերությունը կարող է բացատրվել արևելահայ տարբերակը վատ հասկանալու պատճառով:

«Ձեր երեխաներին տվե՞լ էք հայկական անուն» հարցին, չափահաս երեխաներ ունեցող ծնողների 28 տոկոսը և անչափահաս երեխաների ծնողների 41 տոկոսը տալիս է դրական պատասխան: Քանի որ սկզբունքորեն անչափահաս երեխաներ ունեցող ծնողներն ավելի երիտասարդ են, ապա տոկոսային այս բարձր հարաբերությունը կարող բացատրվել իրենց երեխաների հայկական ծագումը շեշտելու մտադրությամբ:

«Ձեր երեխաներին տանո՞ւ մ էք ապրիլի 24-ի ցույցերին» հարցին դրական պատասխան են տալիս անչափահաս երեխաներ ունեցող ծնողների 23 տոկոսը և չափահասների 48 տոկոսը: Սփյուռքում ապրիլի 24-ի ցույցերին մասնակցելը համայնքային պատկանելությունը հավաստելու հզոր գործոն է: Ընդհանուր առմամբ, ծնողների 72 տոկոսը հայտարարում է, որ շատ կարևոր է հայ պահանջատիրական ցույ-



ցերին մասնակցելը, որը երեխաների համար ազգային պատկանելության հզոր լծակ է:

Հարցախույզի վերջին հարցը վերաբերում է հայկական ազգանունը հավաստող - յան վերջավորությանը: Ծնողների միայն 20 տոկոսն է կարծում, որ հայկական ազգանվան վերջավորությունը կարող է երեխային տալ հայ ազգային պատկանելության զգացում, մինչդեռ 80 տոկոսը հակառակ կարծիքի է: Հիշեցնենք, որ պ/տ սերնդի 45 տոկոսի համար հայ ազգանունը մատնանշող վերջավորությունը ազգային պատկանելության գորեղ նշան է: Մեկ սերնդից մյուսը այդ մեծ տարբերությունը կարելի է բացատրել նրանով, որ ծնողների սերնդի համար, որն ավելի համակված է ընդունող երկրի հասարակությանը, ազգանունն ունի պակաս նշանակություն ազգային պատկանելությունը հավաստելու համար, իսկ ավագ սերունդն ավելի է կապված ընտանեկան պատմությանն ու ազգային արմատներին:

Այսպիսով, հարցումների արդյունքը ցույց է տալիս, որ լեզվական գիտելիքների փոխանցումը ծնողներից երեխաներին վերաբերում է երեխաների միայն 20 տոկոսին, որոնք տանը լսում են հայերեն խոսքը և ձեռք բերում լեզվական տարրական գիտելիքներ: Անհրաժեշտ է նշել, որ լեզվական գիտելիքները փոխանցելու համար ծնողներն իրենք պետք է այս կամ այն չափով տիրապետեն հայոց լեզվին: Միջսերնդական փոխանցումը կարող է իրականանալ միայն այն գիտելիքներից, որոնց տիրապետում են իրենք՝ փոխանցողները: Բնչպես ցույց են տալիս հարցախույզի արդյունքները, համեմատած պ/տ սերնդի ունեցած լեզվական գիտելիքների, ծնողների սերունդն ունի լեզվական անբավարար գիտելիքներ, որի արդյունքում, եթե նրանց 50 տոկոսը հավաստում է, որ գիտի հայերեն, ապա նրանց միայն 44 տոկոսն է այն գործածում ամեն օր: Պարզվում է, որ լեզվական գիտելիքների փոխանցումը երիտասարդ սերնդին կատարվում է անբավարար, ինչը չի կարող ապահովել լեզվական սերնդափոխությունը: Կարելի է եզրակացնել, որ ֆրանսահայ համայնքում մեկ սերնդից մյուսին լեզվական գիտելիքների փոխանցումը կնվազի և երկու սերունդ հետո հայերեն սահուն խոսողները կկազմեն համայնքի չնչին մասը:

Ազգային մշակութային ինքնության արժեքների փոխանցման ամենագործուն տարածքը ընտանեկան միջավայրն է, որտեղ սկսվում է երեխայի կազմավորման համար գիտելիքների փոխանցման առաջին հանգրվանը: Տանը գտնվող և Հայաստանը հիշեցնող իրերը՝ լուսանկարներ, գրքեր, զանազան հուշանվերներ, փոքրիկ խաչքարեր, արձանիկներ, պատկերազրքեր և այլն, երեխայի մոտ ազգային պատկանելության զգացում ներշնչող ամենաազդու լծակներն են: Մանուկ հասակից, շրջապատված այդ իրերով, երեխան պատկերացում է կազմում Հայաստանի մասին, հայ ազգային խորհրդանիշները դրոշմվում են նրա երևակայության և հիշողության մեջ: Իրերի, առարկաների միջոցով կատարվող ազգային հիշողության փոխանցումը կարող է շատ ավելի ազդու լինել, քան բանավոր խոսքը: Այնպիսի խորհրդանիշներ, ինչպիսիք են Արարատի պատկերը, Մարդարապատի հուշարձանը կամ Էջմիածնի Մայր տաճարը կարող են ավելի շատ տեղեկություններ հաղորդել երեխաներին, քան բանավոր փոխանցվող պատմությունները: Նշենք, որ ազգային ինքնության ար-

ժեքների փոխանցման այդ միջոցը պահանջում է նվազագույն ջանք ծնողների կողմից, ի դեմս լեզվական գիտելիքների փոխանցման գործընթացի, որը պահանջում է ամենօրյա ջանք, կանոնավոր ներդրում: Կարելի է ասել, որ իրերն իրենք են խոսում Հայաստանի մասին:

Համայնքային պատկանելության զգացումը, երեխայի ինքնության կազմավորումը սկսվում է մանուկ հասակից: Այս գործընթացը կարող է իրականանալ միայն ընտանեկան միջավայրում:

Ի տարբերություն Հայաստանը հիշեցնող իրերի, տանը գտնվող երաժշտական խոսակալառականները, սալիկները, տեսասալիկները պակաս դեր են կատարում որպես երեխային ազգային երաժշտական զգացողություն հաղորդելու միջոց:

Ծնողների մեծամասնությունը գտնում է, որ երեխաներին Հայաստան ուղարկելը և ուղղակի շփվելը հայկական իրականության հետ, ազգային պատկանելության զգացում արթնացնելու հզոր լծակ է: Դժբախտաբար, դա վերաբերում է երեխաների փոքրամասնությանը: Ամառային ճամբարները նույնպես ազգային զգացում ներշնչելու արդյունավետ միջոց են:

Ծնողները մեծ մասամբ հավանություն են տալիս երեխաներին ուղեկցել եկեղեցի և գրանցել միօրյա հայկական դպրոց, սակայն նրանց չափազանց փոքր մասն է դա իրականացնում:

Ծնողները քաջալերում են իրենց երեխաներին հաճախել համերգների, հանդեսների, ներկայացումների, որոնք ազգային պատկանելության գորեղ նշաններ են:

Ընդհանուր առմամբ, հարցախույզի արդյունքները ցույց են տալիս, որ ծնողների միայն կեսն է (44 տոկոսը) ակտիվորեն մասնակցում իրենց երեխաներին ազգային ինքնության որոշ արժեքների փոխանցման գործընթացին: Սակայն փոխանցվող այդ արժեքները տարակազմ են, ոչ համասեռ, պայմանավորված իրենց՝ ծնողների ունեցած գիտելիքների ծավալով: Ընտանեկան միջավայրում բոլոր երեխաները չեն օգտվում ազգային արժեքների միննույն գիտելիքներից: Այս բոլորի արդյունքում, երիտասարդ սերունդը ձեռք է բերում անկանոն, խայտաբղետ գիտելիքներ, մի մասը ժառանգում է լեզվական որոշ գիտելիքներ, մեկ ուրիշը՝ երաժշտական, մի երրորդը՝ պատմական և այլն: Բոլոր դեպքերում, ձեռք բերած գիտելիքները բավականաչափ հաստատուն և խորունկ չեն երեխայի մոտ ազգային ուժեղ պատկանելության զգացում առաջացնելու համար: Այդ գիտելիքները կարելի է համարել հիմք, որի վրա չափահաս տարիքում զարգացնելու, ընդլայնվելու է ազգային պատկանելության զգացումը:

Պետք է ասել, որ ազգային ինքնության որոշ արժեքների ձեռքբերումը բավարար չէ անձի մեջ ազգային համայնքային պատկանելություն առաջացնելու համար: Անձը պետք է այդ արժեքները մշակի, կիրարկի կանոնավոր ձևով, դարձնի ապրելակերպ, որպեսզի ինքը իր հերթին դառնա համայնքի լիիրավ անդամ ու ազգային ինքնության արժեքների փոխանցման շղթայի օղակներից մեկը:

Միյուրոքի պայմաններում մանուկ հասակից ընդունող երկրի մշակութային արժեքների ձեռքբերումը բնական ու անխուսափելի երևույթ է: Այն երեխաները, ովքեր

ծնողներից ժառանգել են ազգային մշակութային արժեքներ, չափահաս տարիքում տիրապետում են երկու տարբեր և ինքնատիպ մշակութային արժեքների՝ իրենց ապրած երկրի ու ծնողներից ժառանգած մշակութային արժեքներին: Այս դեպքում անձն ունենում է համայնքային գույգ՝ իր ապրած երկրի և ծնունդով՝ ծնողներից ժառանգած ազգային պատկանելության զգացում: Զույգ պատկանելության պարագայում, ապրած երկրի համայնքային պատկանելության գիտակցությունը սովորաբար և բնականորեն գերիշխող է դառնում (գործառության տարածքների ամենուր առկայության պատճառով), իսկ ծնողներից ժառանգած համայնքային պատկանելությունը՝ ստորադաս: Միջուռքի համայնքների գլխավոր խնդիրը ազգային մշակութային արժեքների միջսերնդային փոխանցման միջոցով համայնքի հարատևության ապահովումն է:

Համայնքային մշակութային արժեքները բնականորեն երբեք մշտատև չեն: Առանց ճիշտ, արդյունավետ, միջսերնդական փոխանցման, ժամանակի ընթացքում այդ արժեքները կարող են փոփոխվել, աղավաղվել, մոռացության մատնվել կոլեկտիվ հիշողության կողմից և այդպիսով կորցնել իրենց համայնքային էթնիկական միասնություն, կապ, համախմբվածություն ստեղծելու ուժը: Միջուռքի պայմաններում ապրող էթնիկական համայնքների երիտասարդ սերունդներին ազգային արժեքների միջսերնդական լավագույն փոխանցման միջոցով է միայն հնարավոր ապահովել համայնքային հարատևությունը: Նույնիսկ Միջուռքի պայմաններում չկա այնպիսի սերունդ, որ իր հաջորդներին ոչինչ չի փոխանցել: Բոլոր դեպքերում, ավագ սերունդը կրտսեր սերնդին ազգային մշակութային ինչ-որ արժեքներ փոխանցում է ինչպես պատահի, պարզապես բնականորեն, առանց հատկապես նպատակադրված ու մտածված եղանակի: Մակայն այդպիսի պարզ, ոչ ռազմավարական ձևով ծրագրված փոխանցումները լինում են խառնիխուռն, հաճախ կցկտուր տեղեկություններ ազգային ավանդությունների կամ լեզվում հաճախ օգտագործվող մի քանի բառերի մասին: Ազգային ինքնությանը վերաբերող այդ բոլոր անկատար գիտելիքները չեն կարող անհատին ներշնչել ազգային պատկանելության խորը զգացում, որպեսզի անձը իրեն համարի համայնքի լիիրավ անդամ: Ազգային ինքնության մշակութային արժեքները սերնդեսերունդ պետք է փոխանցվեն մտածված, նպատակադրված ռազմավարական եղանակով, համակարգված ձևով: Ազգային արժեքների յուրաքանչյուր մնայուն, կայուն բաղադրիչ՝ լեզու, կրոն, պատմական հիշողություն, ժողովրդական ավանդություններ, պետք է ունենա իր փոխանցման համակարգված մեթոդը: Այդ բոլորը կարող է, իրոք, իրականանալ միայն հայկական ուսումնական հաստատություններում, որոնք Միջուռքի պայմաններում ազգային ինքնության արժեքների պահպանման հիմքն են:

---

LES LEVIERS DE TRANSMISSION INTERGENERATIONNELLE DES VALEURS  
CULTURELLES IDENTITAIRES NATIONALES DANS LA COMMUNAUTE ARMENIENNE DE  
FRANCE

ROBERT DER-MERGUERIAN

Résumé

Un des objectifs majeurs qui fédère toutes les diasporas arméniennes, consiste à assurer la pérennité des valeurs culturelles identitaires arméniennes et leur transmission. Sans transmission intergénérationnelle des valeurs identitaires nationales, les communautés diasporiques arméniennes sont condamnées à l'acculturation et, à terme, à la perte. Dans les conditions diasporiques, les leviers de transmission se limitent à des espaces réduits : le milieu familial, l'environnement amical et associatif, les établissements d'enseignement et les lieux de culte. Au delà de ces espaces, le processus de transmission est rompu à la faveur des valeurs culturelles dominantes du pays d'accueil. Parmi ces espaces de transmission, la cellule familiale constitue un maillon essentiel de l'expression identitaire. Afin d'étudier, en pratique, le mode de fonctionnement des moyens de transmission des valeurs identitaires dans le milieu familial arménien, nous avons réalisé une enquête anonyme dans la communauté arménienne de France. L'investigation se base sur un questionnaire complété par des familles de la communauté arménienne habitant à Marseille, Aix-en-Provence, Nice, Lyon, Valence, Avignon, Paris et la région parisienne. Les questions posées ont trait aux différents aspects des valeurs identitaires arméniennes : la langue, la mémoire historique, la sensibilité musicale et littéraire, les coutumes religieuses et populaires, les objets et bibelots rappelant l'Arménie, la presse, les moyens modernes de communication (Internet, CD, DVD, TV), c'est-à-dire tout élément qui peut être présent dans l'environnement familial et qui est susceptible de contribuer à la transmission intergénérationnelle. L'étude comporte deux volets principaux : les relations entre Grands Parents /Petits Enfants et celles entre Parents /Enfants. Dans l'ensemble, l'enquête montre que seulement la moitié (44%) de la génération des parents participe à la transmission de certaines valeurs identitaires constituées d'éléments hétéroclites selon les sources de transmission et la propre compétence des parents dans divers domaines. Tous les enfants ne bénéficient pas des mêmes sources d'information dans le milieu familial, contrairement à la vocation de l'école. Il en résulte une génération d'adolescents aux connaissances de nature variée et composite : certains héritent de connaissances linguistiques élémentaires, d'autres bénéficient d'un éveil musical ou artistique, d'autres d'informations historiques ou géographiques. Dans l'ensemble, les valeurs transmises, de par leur nature, ne sont pas suffisamment profondes pour produire, dès le jeune âge, un sentiment fort d'appartenance au groupe. Elles peuvent être considérées comme une première étape indispensable qui sera développée à l'âge adulte au cours duquel le sentiment d'appartenance est ressenti et effectivement vécu. En fait, la simple acquisition du contenu des valeurs identitaires n'est pas suffisante pour affirmer chez l'individu le sentiment d'appartenance active au groupe. Il est nécessaire de cultiver ces valeurs, de les pratiquer régulièrement, d'en faire son mode de vie, de leur insuffler de la vitalité afin que l'individu devienne, à son tour, un maillon actif de transmission. Le problème majeur des communautés ethniques diasporiques est de s'inscrire dans la durée en conservant, par la transmission, leur identité culturelle particulière. Les valeurs culturelles ethniques ne sont jamais naturellement pérennes en soit. Sans bonne transmission intergénérationnelle, au fil du temps, elles peuvent s'altérer, tomber dans l'oubli, s'effacer de la mémoire collective et perdre ainsi leur capacité de produire la cohésion du groupe. Le risque de perte est plus réel pour les groupes qui évoluent dans des conditions diasporiques. Ce n'est que de la bonne transmission des valeurs culturelles aux générations successives que dépend la pérennité du groupe.